ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«14» 10 2021թ.
№ ԿՊՇՆ/2-1389

Արթուր Հարությունյան Ա/Ձ-ին (ՀՎՀՀ 23127576)
հասցե՝ ՀՀ ք. Երևան, Նոր Արեշ 35փ 109/1
էլ. հասցե՝ tendersdekon@gmail.com

ՀՀ պաշտպանության նախարարության և Արթուր Հարությունյան Ա/Ձ-ի միջև 03.08.2021թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-21-4/8-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Արթուր Հարությունյան Ա/Ձ-ն 2021թ. 3-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ քան 01.09.2021թ. պետք է մատակարարեր ընդհանուր 1993 լիտր ուայթ սպիրիտ (լաքային բենզին): 30.08.2021թ. մատակարարված 1337 լիտր ուայթ սպիրիտը պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով վերադարձվել է մատակարարին: Արդյունքում 1993 լիտր ուայթ սպիրիտ չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի ա) և բ) ենթակետերի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ. հոկտեմբերի 13-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ Արթուր Հարությունյան Ա/Ձ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 7607 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն և 6915 ՀՀ դրամ՝ որպես տուգանք Պայմանագրի 6.3 կետի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 138314 ՀՀ դրամ՝ որպես տուժանք (պայմանագրի կատարման ապահովում) և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին ենթակա է գանձման 207471 ՀՀ դրամ՝ որակավորման ապահովում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am